

պուրկի գեսպան Գասպէրյաթագ մարդիղին որ անցագիրներն առնէ ու Բեգրպուրկէն ելլէ :

Բեգրպուրկի ըստիրը հետեւեալ յայտարարու-
թիւնը կը հրատարակէ . Անգղիոյ ու Գաղղիոյ ար-
քունեաց իրենց նաւական զորութիւնները Աւ ծով
մնացընելու որոշմունքը՝ բերնով միայն կայսերական
դահլըճին հազորդութեացաւ . բայց մեր պաշտօնէից
ու երկու գաշնակից գահլըճներուն մէջ գրուած
պաշտօնական ծանուցագիրներէն գուրս կ'ելլէ որ
Անգղիոյ ու Գաղղիոյ կառավարութիւնները ոչ
միայն միտք ունենին պաշտպանելու Տաճիկները
Ռուսի կողմէն եղած ամէն ծովային յարձակմունք-
ներուն դէմ, այլ նաև անոնց օգնել իրենց նաւա-
հանգիստները պաշտար անելու, միանգամայն ար-
գիւլելով Ռուսաց որ իրենց նաւահանգիստները
պաշար չաանին . միով բանիւ՝ խափանել անոնց Աւ
ծովուն ջրերուն մէջ ազատ նաւարկութիւնը : Եր-
կու տէրութեանց այս գործունէութիւնը՝ Վայսեր
աչքին առջև ոչ միայն ծանր վնաս բերող բան մը
կ'երևայ իր իրրև պատերազմող ունեցած իրա-
ւունքներուն, այլ նաև իրական գործակցութիւն
մը պատերազմին : Վայսըը հանգիստապէս կը բողբէ
այս վնասիս դէմ, ու հիմակուրնէ այնպիսի ճամ-
բու մը ձեռք չզարներ, զորն որ ապագայ գի-
պուածները հարկ պիտի ընեն բռնել տալու :

18 . Գլարէնտըն կոմսը այսպէս կը գրէ Ռեւոզ-
մորէնա կոմսին ի վեննա . Գոլտրետոյ կոմսը
Պուլ կոմսին մէկ պաշտօնագիրը կարգաց ինձի՝
Օուլֆ կոմսին վեննա ունեցած պաշտամանը վե-
րաբերեալ . (Տես 4) . Աւստրիոյ կայսրը ոչ եր-
բէք ինքը իրեն ձեռքերը պիտի կապէ չեղոք կե-
նալու բացարձակ գաշնագրութեամբ մը . քանի որ
բաւական ապահովութիւններ չունենայ թէ Եւ-
րոպայի Տաճկաստանին կործանմամբ իր կայսե-
րութեան շահը վտանգի մէջ չիյնար : Թէ որ Ռու-
սաց կայսրը Գանուբէն ալ անգին պատերազմը
աստակութեամբ անցընելու որոշէ, քրիստոնեայ
ժողովուրդներու մէկ ապստամբութիւնը անհա-
մար չար հետեանքներ կրնայ ունենալ : Աւստրիա
պէտք է որ իր գործելու ազատութիւնը ամբողջ
պահէ : Այս պատճառաւ է որ խուճի մը զօրք
պատերազմին ասպարիղին մօտ եղած աւստրիա-
կան երկիրները խուրուեցաւ . և այս գուճերուն
թիւր գեռ կ'աւելնայ, թէ որ գիպուածները հար-
կաւոր ընեն անիկայ . և եթէ անհրաժեշտ կարևոր
ըլլայ Աւստրիոյ որ գէնքով մէջ մտնէ, այն ալ այս
հաստատուն գիտմամբ կ'ըլլայ՝ որ գաշնագրու-
թեանց ձեռքով հաստատուած առջի վիճակը ա-
մէն կողմանէ անարատ պահուի :

21 . Ռուսաց կայսրը ասանկ յայտարարութիւն
մը կ'ընէ իր հպատակներուն . Ռուսաստանի դէմ,
որ ռազմաբարձեան համար կը պատերազմի, քրիս-
տոնեութեան թշնամիները Անգղիան ու Գաղղիա
եղան . բայց Ռուսաստան պատրաստ է թշնամոյն
գիմարը ելլելու այնպիսի արիութեամբ մը, որուն
օրինակը մեր նախնիքները տուին մեզի : Մենք այս-
օրուան օրս նոյն ուսու ժողովուրդն ենք՝ ինչ որ
1812 ասրւոյն էինք :

22 . Մեծին Բրիտանիոյ Բարիղի գեսպան Գու-
լի լորտը հետեւեալ ծանուցագիրը կը խաւրէ Գլա-
րէնտըն կոմսին . Պուլ-Շաւընչցայն կոմսը՝ Գաղ-
ղիոյ վեննա ունեցած գեսպանը ապահովուցե-
ր է որ եթէ Անգղիա ու Գաղղիա Գանուբէն իշ-
խանութիւնները պարպելու համար սահմանեալ
միջոց մը ուզենան որոշել, որուն լմբնալը նշան
մը կ'ըլլայ թշնամութիւնները սկսելու, վեննայի
գահլըճը այս առաջարկութիւնը գուրս կը հանէ .
Ռուսաց կողմէն մերժումը կամ նոյն իսկ լու-
թիւնը՝ իրրև պատերազմի հրատարակում մը սե-
պուի :

Վաշա մը անգղիացի զօրք Սառուհէմբըրնէն ու
Լիվըրքուլէն նաւեր կը մանէ արեւելք երթալու
համար . ասոնց ընդհանուր գլուխ կը գրուի լորտ
Ռաւկան զօրապետը :

23 . Գաղղիոյ արտաքին գործոց ու ծովային
զինուորութեան պաշտօնեայք չըջարեական մը
կը հանեն Գաղղիոյ ամէն քաղաքական գործակա-
ններուն, ծովակալներուն ու նաւական զորութե-
գլխաւորներուն, որ Ռուսաստանի հետ պատե-
րազմ ընելու առթին մէջ՝ Գաղղիա ու Անգղիա
փոփոխակի պաշտպանութիւն ընեն ամէն կողմ
երկու տէրութեանց ալ ամէն հպատակներուն ու
գրօշակներուն :

Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց պաշտօ-
նեայն ալ իր կողմանէ նոյն պատճառներուն հա-
մար նման չըջարեական մը կը հանէ Անգղիոյ ա-
մէն գեսպաններուն ու հիւպատոսներուն, ծովա-
կալներուն ու գաղթականութեանց կառավար-
ներուն :

Կը շարունակուի :

ԱՍՏՂԱԲԱՆԵՍԱԿԱՆ

Ն-ր երիտայի երեւոյն հէ :

Մտերս Անգղիոյ Պիտըրն-Նոգգիկնկէմէր քա-
ղաքը երկնային երևոյթ մը երևցաւ, զոր հօու աս-
տղաբաշխը Սքէնթոբ օրագրին մէջ ստորագրեց :
Այս աստղաբաշխին ըսածին նայելով՝ ասիկայ
խիստ հետաքրքրական ու զարմանալի մետեորա-
ներէն մէկն է իր ինչուան հիմա գիտածներուն
մէջ : Ասոր ձեռ լուսնի պէս բոլորչի էր և տրամա-
գիծն ալ գրեթէ լուսնին արամագծին չափ . իսկ
լոյսը այն աստիճանի աստիկ էր, որ արևուն լոյ-
սէն վար չէր մնար : Այս նորատեսիլ լուսինս գի-
սաւոր աստեղաց պէս պոչ մըն ալ ունէր, որն որ
խիստ լայն էր և լոյսը քիչ մը գեղնորակ : Քառօրգ
մը տևեց այս զարմանալի երևոյթս, և անկէջ վեր-
ջը ամէն բան աներևոյթ եղաւ առանց մէկ նշա-
նի մը :